2, Աւ. Տէր Ցարութիւնեան։ Պոշեան եւ նրա գործունէութեան արժէքը։ 1908 Ն. Նախիջևան։

Այս աշխատութիւնը նուիրուած է պ. Մանուկ Աբեղեանցին և ով որ աշակերտել է վերջինիս, նա իսկոյն կնկատի ուսուցչի ազդեցութիւնը իր աշակերտի գրուածքի վերայ։ Սակայն Մ. Աբեղեանը Պերճ Պռոշեանցին վիպասան է ճանաչում, իսկ մեր հեղինակը Պ. Պռոշեանի արժանաւորութիւնը տեսնում է միմիայն նրա ազգագրական նիւթերի և լեզուի մէջ։ Եթէ չենք սխալւում նոյն կարծիքը քանիցս յայտնել է և Պ. Լէօն։ Մենք նրանց համամիտ չենք և ընդհանրապէս կարծում ենք, որ Պ. Պռոշեանցը վիպագրողի իսկական տաղանդ ունէր և իր երկերով կարողացել է կենդանի պատկերներ տալ թէ գործող անձերի և թէ դէպքերի։ Նրա նշանակութիւնը մեր գրականութեան և կեանքի մէջ մեծ է հէնց իբրև վիպասան-պատկերահանի, որ կարողացաւ ընթերցողների լայն շրջաններին և մի քանի սերունդներին ծանօթացնել մեր գիւղացու չար ու բարի, ընտանիքի և հասարակական կեանքի հետ։

Աւ. Տէր-Ցարութիւնեանը Պ. Պռոշեանի վէպերը ենթարկում է մանրամասն քննութեան և խնդիրը լուսաբանելու համար մի քանի հետաքրքրական պատմական և քննադատական տեսութիւններ է անում։ Մեր քննադատական ամայի տապարիզում այս ուսումնասիրութիւնը անշուշտ կունենայ իր որոշ տեղը։

3, Թէոդիկ. Ամէնուն Տարեցոյցը 1908 Կ. Պոլիս։

Վ. և Ն. Տէր-Ներսիսեանների այս օրացոյց — Ամանակը շատ պիտանի և տեղեկութիւններով հարուստ հրատարակութիւն է։ Հետաքրքրուողը կարող է այս Տարեցոյցից քաղել շատ բազմաթիւ տեղեկութիւններ Կ. Պոլսի կեանքի, հիմնարկութիւնների և գործիչների մասին։

Հրատարակութիւնը ունի նաև գրական բաժին և բազմաթիւ պատկերներ՝ Օրմանեան պատրիարքի, յայտնի ամոլ — հեղինակների՝ Հ. և Զ. Ասատուրի և այլոց։ Ցաւում ենք, որ այսպիսի հրատարակութիւնք մենք, Կովկասահայերս, չունինք։

Գրագէտ